ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 844 - Ա

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ, ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կլիմայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

1. Հաստատել՝

1) կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) խորհրդի ներքո գործող մեղմման քաղաքականության հարցերով, հարմարվողականության քաղաքականության հարցերով և կլիմայական ֆինանսավորման հարցերով աշխատանքային խմբերի (այսուհետ՝ աշխատանքային խմբեր) կազմերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) խորհրդի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) աշխատանքային խմբերի ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Խորհրդի և աշխատանքային խմբերի կազմում ընդգրկված պետական մարմինների ղեկավարներին՝ 1-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել, համապատասխանաբար, խորհրդի անդամի և աշխատանքային խմբերի անդամների թեկնածությունները, այդ թվում՝ N 3 հավելվածի 7-րդ կետով նախատեսված դեպքում:

3. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝

1) 10-օրյա ժամկետում նշանակել խորհրդի քարտուղարության գործառույթներն իրականացնող համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում (այսուհետ՝ քարտուղարություն).

2) վեցամսյա ժամկետում ապահովել՝

ա) խորհրդի կազմում ընդգրկվելիք հասարակական միավորումների (բացառությամբ գիտական կազմակերպություն հանդիսացող հասարակական միավորումների) և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրության նպատակով մրցույթների կազմակերպումը՝ համաձայն N 3 հավելվածով սահմանված կարգի,

բ) աշխատանքային խմբերում ընդգրկվելիք անկախ փորձագետների ընտրության նպատակով մրցույթների կազմակերպումը՝ համաձայն N 4 հավելվածով սահմանված կարգի,

գ) խորհրդի և աշխատանքային խմբերի անհատական կազմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի որոշման նախագծի ներկայացումը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

4. Խորհրդի նախագահի իրավասություններն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետին՝ սույն որոշման 3-րդ կետով նախատեսված գործընթացների ավարտից հետո 1-ամսյա ժամկետում հաստատել՝

1) խորհրդի անհատական կազմը.

2) աշխատանքային խմբերի անհատական կազմերը:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հուլիսի 6-ի «Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N 955-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 719-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ